ԱՌՑԱՆՑ ՀԱՆԴԻՊՈՒՄ-ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱՆ



Հոկտեմբերի վերջին օրն աշխարհի տարբեր երկրներում նշվում է որպես խնայողությունների համաշխարհային օր: Օրն առիթ է՝ հանրության ուշադրությունը հրավիրելու սեփական առողջությանը, իրերին, բնական ռեսուրսներին և դրսևորել դրանց նկատմամբ հոգատար վերաբերմունք: Ամեն տարի ԱրՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի ֆինանսահաշվային ամբիոնը ուսանողության և ոլորտի պատասխանատու պաշտոնյաների հետ կազմակերպում է միջոցառում: Ֆինանսահաշվային ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Նարինե Մելքումյանի նախաձեռնությամբ այս տարի միջոցառումը կազմակերպվեց առցանց եղանակով՝ վեբինար-քննարկման ձևաչափով, որին մասնակցում էին ԱՀ էկոնոմիկայի և գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալ Նորայր Մուսայելյանը, ԱՀ էկոնոմիկայի և գյուղատնտեսության նախարարության տնտեսական զարգացման վարչության պետ Բելլա Պետրոսյանը, «Արդշինբանկ» ՓԲԸ-ի Ստեփանակերտի մասնաճյուղի կառավարիչ Քաջիկ Խաչատրյանը, համալսարանի դասախոսներ, ուսանողներ:

Միջոցառման ընթացքում ֆինանսահաշվային 3-րդ կուրսի ուսանողները ներկայացրին իրենց վերլուծությունները՝ «Գյուղատնտեսական արտադրության արդյունավետության բարձրացման ուղիները» (Հեղինակներ՝ Մինասյան Աննա, Պետրոսյան Բելլա), «ԱՀ ջրային ռեսուրսների հիմնախնդիրները» (Հեղինակներ՝ Հարությունյան Աննա, Թամրազյան Ռոմելլա), «Այլընտրանքային էներգետիկան՝ որպես ԱՀ էկոլոգա-էներգետիկ անվտանգության գործոն» (Հեղինակներ՝ Կարապետյան Քրիստինե, Պողոսյան Անահիտ), «Առողջության պահպանման մերօրյա հիմնախնդիրները» (Հեղինակներ՝ Հարությունյան Լուսինե, Միքայելյան Աշխեն), «Ավանդները՝ որպես խնայողության միջոց» (Հեղինակներ՝ Շահնազարյան Տիրուհի, Շեկյան Մարտա) թեմաներով:

Ֆինանսահաշվային ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Նարինե Մելքումյանը, ողջունելով վեբինարի մասնակիցներին, կարևորել է թեման՝ նշելով. «Արցախն այսօր գտնվում է հետպատերազմյան դժվար վիճակում, երբ, կորցնելով բազմաթիվ կյանքեր, կորցրել է նաև տարածքներ՝ իրենց ռեսուրսներով, տեսարժան վայրերով: Անհրաժեշտ է էլ ավելի խորը մտահոգվել գյուղատնտեսական արտադրանքի արտադրողականության բարձրացմամբ՝ հայթայթել նվազած հողատարածքները վերամշակելու առավել ինտենսիվ եղանակներ: Պատերազմից հետո, մեր հանրապետությունում արդեն իսկ սահմանափակ են էլեկտրաէներգիայի, ջրային և այլ ռեսուրսները, կարևոր խնդիր է դրանց ողջամիտ օգտագործումը: Մեր բնական հարստությունների հանդեպ հոգատար վերաբերմունքը ապագայում բարեկեցության երաշխիք է ողջ Արցախի բնակչության համար»:

«ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ամսաթերթ
Հիմնադիր՝ «ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈՒԿ
Հրատարակվում է 1994 թվականից
Խմբագիր՝ Զ. Սառաջյան
Մեր հասցեն՝ Մ.Գոշի 5: Հեռ.՝ (047) 94 04 91
Տպաքանակ՝ 400
Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում
Իմացիր քո համալսարանի մասին:
Այցելիր asu.am կայք:
www.asu.am

ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄՍԱԹԵՐԹ - ЕЖЕМЕСЯЧНАЯ ГАЗЕТА «АРЦАХИ АМАЛСАРАН»

№ 08(236)
նոյեմբեր - 2021

ԱրՊՀ ՌԵԿՏՈՐ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ ուսանողներ,

Այսօր առիթ է՝ մեկ անգամ ևս արժևորելու ուսանողության դերը և գնահատանքի խոսքեր ասելու ձեզ: 44-օրյա պատերազմը ապացուցեց, որ այսօրվա ուսանողը հայրենիքի արժանի զավակն է, ազգային ճշմարիտ արժեքներ ունեցող հայրենասեր քաղաքացի և համամարդկային արժեքներ կրող անհատ: Պատերազմի օրերին մեր տղա ուսանողները շտապեցին առաջնագիծ՝ զենքով պաշտպանելու հայրենիքը, իսկ աղջիկները՝ կամավորագրվեցին թիկունքային աշխատանքներին: Ցավոք, ունեցանք կորուստներ և վիրավորներ...

Մեր 26 ուսանողներ հանուն հայրենիքի պաշտպանության դարձան անմահ հերոսներ՝ հավերժ մնալով ուսանող, բայց մարդկությանն ու աշխարհին տալով կյանքի մեծագույն դասը: Հավերժ փառք ու պատիվ նրանց և երախտագիտություն ու խոնարհում նրանց ծնողներին:

Այսպես է եղել նաև Արցախյան շարժման տարիներին, Արցախյան առաջին և ապրիլյան պատերազմների ժամանակ: Սերունդները փոխվում են, բայց անփոփոխ է մնում գերագույն նպատակը՝ հայրենակերտում: Այսօր էլ ձեզնից յուրաքանչյուրն իր ամենօրյա աշխատանքով, համալսարան այցելելով, նորանոր գիտելիքներ ձեռք բերելով նպաստում է հայրենակերտմանը՝ ապրեցնելով մեր վիրավոր Արցախը:

Պատերազմից հետո և ապա՝ համավարակով պայմանավորված դժվարությունները մենք միասին հաղթահարում ենք ամեն օր և միասին արձանագրում մեր հաջողությունները, որոնցից հատկանշական է ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը հաջողությամբ անցնելը:

Հավատում եմ, որ Արցախի պետական համալսարանում այսուհետ ևս արվելու է ամեն հնարավորը՝ կրթության որակի շարունակական բարելավում ապահովելու, մրցունակ և աշխատաշուկայում պահանջարկ ունեցող շրջանավարտ թողարկելու համար:

Ջերմորեն շնորհավորում եմ բոլորիդ՝ Ուսանողության միջազգային օրվա առթիվ և մաղթում նորանոր նվաճումներ ձեր ընտրած բնագավառում: Հորդորում եմ արդյունավետ օգտագործել ձեզ ընձեռված ժամանակն ու հնարավորությունները՝ ի նպաստ նոր գիտելիքներ ու կարողություններ ձեռքբերելուն: Խաղաղություն և հաջողություններ ձեզ:

ԿԱՅԱՑԵԼ Է ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԻՍՏ

Նոյեմբերի 8-ին տեղի է ունեցել ԱրՊՀ ռեկտորատի նիստ, որի օրակարգում կորոնավիրուսային համավարակի տարածման պատճառով ստեղծված իրավիճակի հետ կապված՝ ԱրՊՀ ուսումնական գործընթացը հեռավար եղանակով իրականացնելու մասին հարցն էր:

Ռեկտորատը որոշեց նոյեմբերի 8-ից ուսումնական գործընթացը պարտադիր կազմակերպել հեռավար ուսուցման եղանակով: Դասընթացները իրականացնել ըստ գործող դասացուցակի և գրանցել մատյաններում:

Ֆակուլտետների դեկաններին, ուսումնական գործընթացի վերահսկման բաժնին և որակի ապահովման կենտրոնին հանձնարարվեց՝ վերահսկել դասընթացները հեռավար ուսուցման եղանակով իրականացնելու գործընթացը:

ԱՐՊՀ-ՈՒՄ ԲԱՑՎԵԼ Է ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

«Genesis Armenia» ուղեղային կենտրոն-հիմնադրամի նախաձեռնությամբ ԱրՊՀ-ում բացվել է տարածաշրջանային լեզուների ուսուցման կենտրոն:

Կարո Կարապետեանի անվան կենտրոնը, որը զինված է արհեստավարժ ուսումնառության համար անհրաժեշտ տեխնիկայով ու գույքով, այսօր պաշտոնապես իր դռներն է բացել սովորողների համար: Նախաձեռնությունը կյանքի է կոչվել Կարո Կարապետեանի տիկնոջ՝ Վարդուկ Կարապետեանի և զավակների (Տէր և տիկին Մեղրի և Պէտի Աուտիշ, զաւակը՝ Վանի, Աբօ Կարապետեան, Ուռի Կարապետեան) ու Genesis Armenia-ի ջանքերով:

Կենտրոնում առաջին փուլով մեկ տասնյակից ավելի արցախցի երիտասարդներ անվճար սովորելու են տարածաշրջանի լեզուներ: Ծրագրի նպատակն է պատրաստել կրթված, իր ազգային-պետական շահերը ճանաչող սերունդ:

Genesis Armenia-ի քաղաքականության հիմքում հայկական զույգ պետությունների ռազմաքաղաքական և անվտանգային մարտահրավերները հաղթահարելու նպատակներն են: Կենտրոնն այս քաղաքականության շրջանակում պատրաստելու է մասնագետների, որոնք կկարողանան իրենց հմտությունները գործածել տեղեկատվական, քարոզչական և անվտանգային սպառնալիքների չեզոքացման գործում:

ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը շնորհակալություն է հայտնել Genesis Armenia հիմնադրամին ու հիմնադիր- տնօրեն Աբրահամ Գասպարյանին՝ համագործակցության եւ արդյունավետ ծրագրեր իրականացնելու համար:

ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԱրՊՀ ԳՐԱԴԱՐԱՆԻՆ

Նոյեմբերի 1-ին Արցախի պետական համալսարանի գիտական գրադարանը համալրվել է նոր գրքերի խմբաքանակով: Նվիրատուն այս անգամ «Ջենեսիս Արմենիա» գիտահետազոտական ուղեղային կենտրոն-հիմնադրամն է:

Դեռևս օգոստոսի 27-ին «Ջենեսիս Արմենիա» գիտահետազոտական ուղեղային կենտրոն-հիմնադրամի ներկայացուցչության ԱրՊՀ այցի ժամանակ հիմնադրամի տնօրեն Աբրահամ Գասպարյանը պատրաստակամություն էր հայտնել համագործակցելու ԱրՊՀ-ի հետ և աջակցելու՝ գիտակրթական տարբեր արդյունավետ ու անհրաժեշտ ծրագրերի իրագործման ուղղությամբ: Այդ համագործակցության առաջին պտուղներն արդեն տեսանելի են բուհում:

Արդիական նշանակություն և պահանջարկ ունեցող ավելի քան 230 միավոր մասնագիտական գրքով համալրվել է ԱրՊՀ գրադարանի գրքային ֆոնդը:

Գրադարանի տնօրեն Հասմիկ Հարությունյանը ԱրՊՀ դասախոսական կազմի և ուսանողության անունից շնորհակալություն է հայտնել «Ջենեսիս Արմենիա» գիտահետազոտական ուղեղային կենտրոն-հիմնադրամին՝ գրադարանը արժեքավոր գրքերով համալրելու համար:

* * *

Նոյեմբերի 9-ին Արցախի պետական համալսարանի գիտական գրադարանը համալրվել է նոր գրքերի խմբաքանակով: Նվիրատուն այս անգամ Ֆրեզնոյի պետական համալսարանի Հայագիտական ամբիոնի վարիչ, դոկտոր Բարլո Տէր-Մկրտչեանն է:

Համագործակցության շրջանակում Բարլո Տէր-Մկրտչեանն ԱրՊՀ գիտական գրադարանին է նվիրաբերել արդիական նշանակություն և պահանջարկ ունեցող շուրջ 400 միավոր մասնագիտական գիրք:

Արցախի պետական համալսարանի ռեկտոր Արմեն Սարգսյանը, կարևորելով Ֆրեզնոյի պետական համալսարանի Հայագիտական ամբիոնի հետ համագործակցությունը, շնորհակալություն է հայտնել դոկտոր Բարլո Տէր-Մկրտչեանին նախաձեռնության համար՝ համոզմունք հայտնելով, որ առջևում կլինեն համագործակցային արդյունավետ նոր ծրագրեր, որոնք միտված կլինեն կրթական երկու հաստատությունների գործակցությանը, Արցախ-Սփյուռք կապի ամրապնդմանն ու կրթության, գիտության զարգացմանը ԱրՊՀ-ում:

Արցախի պետական համալսարանի ռեկտորատը, բարձր գնահատելով Բարլո Տէր-Մկրտչեանի գործունեությունը՝ որոշում է կայացրել Արցախի պետական համալսարանի 50-ամյակին նվիրված հուշամեդալով պարգևատրել Ֆրեզնոյի պետական համալսարանի Հայագիտական ամբիոնի վարիչ Բարլո Տէր-Մկրտչեանին՝ սերտ համագործակցության և ԱրՊՀ զարգացման գործում ունեցած ներդրման համար:

ԱՌՑԱՆՑ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԲԻՈՏԵԽՆՈԼՈԳ ԼԵՎՈՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ՀԵՏ

Նիդեռլանդներում բնակվող մեր հայրենակից, ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների դոկտոր, բիոտեխնոլոգ Լևոն Բաղդասարյանը նոյեմբերի 20-ին Zoom հարթակի միջոցով հանդես է եկել «Առողջության բաղադրիչները և արտաքին միջավայրի ազդեցությունը» թեմայով դասախոսությամբ, որին մասնակցել են 80-ից ավելի ուսանողներ, դասախոսներ և հոգեբաններ Արցախից:

Պրոֆեսոր Լ.Բաղդասարյանի մոտ նման ձևաչափով հանդիպում նախաձեռնելու գաղափարը ծագել է՝ դիտելով ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱԳ պրոռեկտոր, հ.գ.թ., դոցենտ Վիտյա Յարամիշյանի հեռուստաթերը, ով պատմում էր համավարակի պայմաններում ուսումնական գործընթացը հեռավար եղանակով իրականացնելու և ԱրՊՀ մյուս ծրագրերի մասին: Գիտնականի առաջարկը սիրով ընդունվեց համալսարանականների կողմից: Պրոֆեսոր Բաղդասարյանը նախկինում եղել մայր բուհում և դասախոսություն ընթերցել «Ցեղասպանության գենետիկական հետևանքները թեմայով»:

«Առողջության բաղադրիչները և շրջակա միջավայրի ազդեցությունը» թեմայով դասախոսության ընթացքում պրոֆեսորն անդրադարձել է մարդու հոգեկանի վրա ունեցող արտաքին ազդեցություններին՝ առանձնացնելով մեդիաազդեցությունը, որը, նրա կարծիքով, ամենաազդեցիկն է:

«Ինֆորմացիան է, որը կարող է կազմալուծել մարդու հոգեկանը»,-գտնում է նա՝ առանձնացնելով նաև մեդիայի միջոցով փոխանցվող դրական և բացասական ազդակները:

«ՀՀ ԵՎ ԱՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ» ԹԵՄԱՅՈՎ ԱՌՑԱՆՑ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Նոյեմբերի 26-ին տնտեսագիտության ֆակուլտետի ֆինանսահաշվային ամբիոնի նախաձեռնությամբ և «Ֆինանսներ» մասնագիտության առաջին կուրսի ուսանողների մասնակցությամբ կազմակերպվել է առցանց հանդիպում, որի ընթացքում ուսանողները ներկայացրել են ամբիոնի դասախոս Արևիկ Ալեքսանյանի ղեկավարությամբ կատարած իրենց ուսումնասիրությունները՝ «ՀՀ և ԱՀ ֆինանսական շուկաների կառուցվածքը» թեմայով: Միջոցառումը կազմակերպվել է «Ֆինանսական շուկաներ և ինստիտուտներ» դասընթացի շրջանակում:

Արևիկ Ալեքսանյանի խոսքով՝ ընտրել են խմբային աշխատանքի մեթոդը, քանի որ այդպես ուսանողները ոչ միայն ինքնուրույն վերլուծություններ են կատարում, այլև սովորում են խմբում աշխատել, դրանով բարձրանում է բոլորի պատասխանատվության աստիճանը. այդ հմտությունները նրանց օգնելու են կոլեկտիվում աշխատելու համար:

«Ինչպես գիտենք, Արցախի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի առաքելությունը աշխատանքի շուկայի պահանջարկին համահունչ, մասնագիտական գիտելիքներով և հմտություններով մրցունակ, համամարդկային արժեքները ճանաչող, գիտելիքահենք տնտեսության կայացմանն աջակցող մասնագետների պատրաստումն է»,-նշել է Ա. Ալեքսանյանը:



ԱրՊՀ-ՈՒՄ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ Է ՀԵՌԱՎԱՐ ԵՂԱՆԱԿՈՎ



Համավարակի տարածման պատճառով ստեղծված իրավիճակի հետ կապված՝ ԱրՊՀ-ում, համաձայն ռեկտորատի որոշման, ուսումնական գործընթացը նոյեմբերի 8-ից պարտադիր կազմակերպվում է հեռավար եղանակով, իսկ որոշ դասընթացների մասով գործընթացը սկսվել էր դեռ ավելի վաղ:

Դասընթացներն իրականացվում են Google for Education| Classroom հարթակի միջոցով՝ ըստ գործող դասացուցակի և գրանցվում մատյաններում: Հարթակում յուրաքանչյուր դասընթացի համար առկա են դասավանդող դասախոսի կողմից ներբեռնված ուսումնական նյութերը՝ դասախոսությունների փաթեթը, առարկայական նկարագիրը, այլ առաջադրանքներ, որոնք հնարավորություն են ընձեռում ուսանողին լիարժեքորեն օգտվելու ուսումնական նյութից և յուրացնելու թեման:

Հեռավար ուսուցման եղանակով իրականացնելու գործընթացը վերահսկում են ֆակուլտետների դեկանները, ուսումնական գործընթացի վերահսկման բաժինը և որակի ապահովման կենտրոնը:

Ուսումնական գործընթացի վերահսկման բաժնի պետ Գոհար Գասպարյանի խոսքով՝ պարապմունքներն ընթանում են բնականոն հունով, իսկ ի հայտ եկող խնդիրները հիմնականում տեխնիկական բնույթ են կրում, որոնք կապված են դասի ընթացքում համացանցի կամ էլեկտրաէներգիայի խափանումների հետ: Բաց թողնված դասաժամը դասախոսը լրացնում է տեխնիկական բնույթի խնդիրները լուծվելուց հետո:

«Քանի որ համալսարանն արդեն ունի Google for Education կրթական հարթակի օգտատերերի գործառույթների հստակ բաշխում, ուստի առցանց ուսուցման առաջադրած որոշ խնդիրներ հեշտությամբ լուծվել են: Առցանց դասընթացներին խոչընդոտող հիմնական պատճառներն օբյեկտիվ են: Կարելի է արձանագրել, որ առցանց ուսուցումը հաջողությամբ է իրականացվում: Համապատասխան ստորաբաժանումները գրանցում են առկա խնդիրները, որոնք հընթացս լուծվում են»,-նշել է ԱրՊՀ ՈԱԿ վարիչ Շուշանիկ Սաղյանը:



Կայացել է «Տարվա լավագույն ուսանող» մրցույթի ներբուհական փուլը

Նոյեմբերի 29-ին տեղի է ունեցել «Տարվա լավագույն ուսանող» մրցույթի ներբուհական փուլը: Յուրաքանչյուր տարի, ըստ կանոնակարգի, մրցույթը անց է կացվում երկու փուլով՝ ներբուհական և հանրապետական՝ հիմք ընդունելով ներկայացված թեկնածուների ուսման առաջադիմությունը, մասնագիտական ձեռքբերումները և հասարակական ակտիվությունը:

2020-2021 ուստարվա «Լավագույն ուսանող» մրցույթի ներբուհական փուլի թեկնածուներն էին տնտեսագիտական ֆակուլտետի «Ֆինանսներ» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողուհի Քրիստինե Կարապետյանը, բանասիրական ֆակուլտետի «Թարգմանչական գործ» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողուհի Սոֆի Աբրահամյանը, պատմության և իրավագիտության ֆակուլտետի «Իրավագիտություն» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանող Կարեն Մարտիրոսյանը, մանկավարժության և սպորտի ֆակուլտետի «Հոգեբանություն» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողուհի Էլլա Արզումանյանը և բնագիտական ֆակուլտետի «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի Արգինե Սարգսյանը:

Թեկնածուները մրցույթի հանձնաժողովին են ներկայացրել իրենց ուսումնագիտական ձեռքբերումները տարբեր ուղղություններում, պատասխանել հանձնաժողովի անդամների հարցերին:

Հիմք ընդունելով ներկայացված թեկնածուների ուսման առաջադիմությունը, մասնագիտական ձեռքբերումները և հասարակական ակտիվությունը՝ հաղթող է ճանաչվել Սոֆի Աբրահամյանը: Ներբուհական փուլի հաղթող ուսանողը հաջորդիվ պետք է մասնակցի հանրապետական փուլին: Մրցույթին ներկայացված մյուս ուսանողները տարբեր անվանակարգերում կխրախուսվեն ԱրՊՀ ռեկտորի կողմից:

Մրցույթի հանձնաժողովի նախագահ, ՈՒՇՀՀՏԱԳ պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը, շնորհավորելով ուսանողներին, մաղթել է նրանց հաջողություններ՝ հորդորելով երբեք չբավարարվել ունեցած գիտելիքներով ու ձեռքբերումներով և շարունակել աշխատել՝ ի նպաստ նոր գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերման:

ԱՌՑԱՆՑ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՄԱՆՑ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ

Նոյեմբերի 20-ին Արցախի պետական համալսարանի ռեկտոր Արմեն Սարգսյանը առցանց հանդիպում է ունեցել Հայագիտական Ուսմանց Ընկերության անդամների հետ և հանդես եկել «Արցախի պետական համալսարան. անցյալը, ներկան և ապագան» թեմայով բանախոսությամբ:



Դեռևս հոկտեմբերի 25-ին ԱրՊՀ եւ Հայագիտական Ուսմանց Ընկերության (ՀՈՒԸ) միջև կնքվել էր համագործակցության հուշագիր՝ կրթության եւ հետազոտության բնագավառում համագործակցության ամրապնդման նպատակով, որի շրջանակում նախատեսվում էր նաև կազմակերպել դասախոսություններ, համատեղ քննարկումներ և այլ ծրագրեր: Համատեղ առաջին ծրագիրն արդեն իրողություն դարձավ՝ առցանց հանդիպում-բանախոսություն ձևաչափով, որին մասնակցում էին նաև մասնագետներ ԱրՊՀ-ից:

Բանախոսության ընթացքում ԱրՊՀ ռեկտորը շնորհակալություն է հայտնել Հայագիտական Ուսմանց Ընկերության նախագահ դոկտոր Պետրոս Տեր-Մաթոսյանին, ընկերության մասնագետներին՝ ԱրՊՀ հետ համագործակցելու, հայրենիք-սփյուռք կապն ամուր պահելու համար: Ռեկտորը ներկայացրել է ԱրՊՀ անցած ճանապարհը, բուհի ունեցած դերը պետականաշինության գործընթացում, համալսարանում ներկայումս իրականացվող գիտակրթական գործունեությունը, արձանագրված հաջողությունները, խնդիրները, խոսել անելիքների և

ապագա տեսլականի մասին:

Ռեկտոր Արմեն Սարգսյանը պատասխանել է նաև հանդիպման մասնակիցների հարցերին, ովքեր պատրաստակամություն են հայտնել աջակցելու Արցախի պետական համալսարանին՝ գիտակրթական ոլորտում իրականացվող ծրագրերի արդյունավետությանը նպաստելու նպատակով:

Հայագիտական Ուսմանց Ընկերության նախագահ դոկտոր Պետրոս Տեր-Մաթոսյանն իր հերթին ևս շնորհակալություն է հայտնել հանդիպման մասնակիցներին ու ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանին՝ թեման հանգամանորեն ներկայացնելու համար և հույս հայտնել, որ ԱրՊՀ և Հայագիտական Ուսմանց Ընկերության միջև համագործակցությունը շարունակական է լինելու, որի շրջանակում առաջիկայում ևս կյանքի են կոչվելու նոր ծրագրեր, ինչպիսիք են աջակցություն օտար լեզուների ուսուցման կենտրոնին, ոչ ֆորմալ կրթության շրջանակում դասախոսություններով հանդես գալը և Հայագիտական Ուսմանց Ընկերության հանդեսի այս համարում ԱրՊՀ մասնագետների հոդվածները զետեղելը: